ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<< Գեղարքունիքի մարզի Վահան համայնքի ղեկավարի վերջին մեկ տարվա / 2011 թ./ կատարած աշխատանքների մասին

1. Հաշվետու ժամանակաշրջանում հրավիրվել են համայնքի ավագանու 7 նիստեր, որոնցում քննարկվել են համայնքին վերաբերող բազմաթիվ հարցեր, ընդունվել են 25 որոշումներ

1. Տրվել է 2010թ. համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը և տրվել են հաղորդումներ համայնքի 2011թ. բյուջեի յուրաքանչյուր եռամսյակի կատարման մասին:

2. Համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել «Տեղական տուրքեր և վճարներ սահմանելու մասին» որոշման նախագիծը: Ավագանու կողմից հաստատվել են բյուջեի փոփոխությունները, աշխատակազմի և ենթակառույցների աշխատակիցների թվաքանակը հաստիքացուցակը և դրույքաչափերը:

3. Քննարկվել և որոշումներ են կայացվել Հայրենական պատերազմի վետերաններին, միջնակարգ դպրոցի շրջանավարտներին, 1-ին դասարանցիներին դրամական աջակցություն տալու մասին:

4. Որոշումներ են կայացվել զոհված կամ հաշմանդամ դարձած զին. ծառայողների ընտանիքներին գույքահարկի գծով արտոնություններ տրամադրելու վերաբերյալ: Քննարկվել են նրանց բնակարանային պայմաններին վերաբերող հարցեր:

5. Քննարկվել են գյուղատնտեսական աշխատանքների անասնաբուժական ծառայության բնագավառում կատարվող աշխատանքներին վերաբերող հարցեր:

Ընդհանուր առմամբ ավագանու 7 նիստերում քննարկվել և կայացվել են 25 որոշումներ:

Կայացվել է համայնքի ղեկավարի 30 որոշումներ:

2. Վերջին մեկ տարում անմասն չենք մնացել համայնքի բնակիչների իրավունքների պաշտպանության բնագավառում՝ օրենքով սահմանված կարգով կատարվել են համայնքի բանակիչների հաշվառումներ, կատարվել են ընդունելություններ, քննության են առնվել նրանց դիմումներն ու բողոքները: Ընդհանուր առմամբ ընդունվել են 56 դիմումներ և ձեռնարկվել են հնարավոր անհրաժեշտ միջոցները.

3. Քաղաքաշինության բնագավառ . Պատվիրվել է համայնքի գլխավոր հատակագիծը: Կատարվել են համայնքի փողոցների, անհատական սեփական տների և այլ օբյեկտների համարակալումը:

4. Կրթության, մշակույթի բնագավառ 2010թ. Կազմակերպվել են համայնքի սեփականություն համարվող մանկապարտեզի շենքի վերանորոգման, արդիականացման աշխատանքները, որում համայնքի ներդրումը կազմել է 2.598.0 մլն դրամ,որից՝ 1.598.0 մլն.դրամը՝ 2011թ.:

2011 թ. ապրիլից գործում է համայնքի մանկապարտեզը:

Ընթացքում անհրաժեշտ տեղեկություններ են տրամադրվել անշարժ գույքի կադաստրին:

5. Կոմունալ տնտեսության բնագավառ. Կատարվել են անհրաժեշտ աշխատանքներ համայնքի ջրմուղու 2-րդ ջրամբարը շահագործելու, ջրամբարի մաքրման, ցանցի ընթացիկ վերանորոգման աշխատանքները կազմակերպելու ուղղությամբ, որի արդյունքում զգալիորեն բարելավվել է համայնքի ազգաբնակչության խմելու ջրով ապահովվածության մակարդակը:

Ներկա պահին ցրտաշունչ ձմռան պատճառով կտրուկ վատացել է ջրամատակարարումը: Ձրի մուտքը օրվա կարգավորվող ջրամբար միանգամից նվազել է: Ակնհայտ է, որ ակունքներում կան սառցակալման պրոցեսներ, շատացել են արտաքին ցանցում ջրի կորուստները, որոնք ներկա պայմաններում ձյան հաստ շերտի տակ աննկատելի են: Ճիշտ է, ներկա դժվար իրավիճակում

բնակչության դժգոհությունները շատացել են: Այժմ հնարավոր բոլոր աշխատանքները կատարվում են և հույս կա որ դրանք լրիվ կշտկվեն 2012թ., քանի որ 2011թ. ֆինանսավորվել են համայնքի ջրմուղու վերանորոգման աշխատանքները, որոնք կիրականացվեն 2012թ.:

6. Առողջապահության, ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառ. Անցյալ գարնանը կազմակերպվել է «Գեղարքունյաց ձմեռ» միջոցառումը: Անց են կացվել մրցումներ սպորտի տարբեր ձևերից: Հաղթողները խրախուսվել են:

7. Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառ Մանկապարտեզի գործելու օրվանից ևս 8 – 10 մարդ ապահովվել է հիմնական աշխատանքով:Շուրջ 40 երեխա հաճախում են մանկապարտեզ և նրանց ծնողները ևս հնարավորություն ունեն զբաղվելու այլ աշխատանքով:

Միջոցներ են ձեռնարկվել հաշմանդամներին, սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ: Այդ նպատակով համայնքային բյուջեից հատկացվել է 675 հազար դրամ, որից օգտվել են 20 ընտանիքներ:

Ինչպես գիտեք համայնքի ազգաբնակչությունը 1200 –ից մի փոքր ավելի է, տնտեսությունների թիվը՝ 432: Թոշակառուների թիվը՝ 235, որից հաշմանդամներ՝ 64 : Համայնքում գործում է գրադարանը, բուժկետը, մանկապարտեզը: Սակայն չի գործում մշակույթի տունը, որը վերանորոգման կարիք ունի, չկան մարզական կառույցներ: Համայնքի երեխաները, երիտասարդությունը հնարավորություն չունի տեղում որևէ խմբակներում ընդգրկվելու, պարապելու:

Համայնքի բնակչության մի մասը աշխատում են հարակից գորամասերում, Ճամբարակ քաղաքում, դպրոցում, գյուղապետարանում և այլ կառույցներում:

Օգտվելով առիթից նշեմ նաև, որ տարեսկզբին համայնքում եղել են 105 նպաստառու ընտանիքներ, կիսամյակից հետո նրանց թիվը դարձել է 65, տարեվերջում՝ 48 ընտանիք:

Համայնքի առջև կանգնած շատ հիմնախնդիրներ կան, սկսած խմելու ջրագծի հիմնանորոգումից, գյուղ. մթերքների իրացման /կաթի/ դժվարություններից, գյուղ.տեխնիկայի պակասից և այլն:

8. Գյուղատնտեսության բնագավառ. Համայնքում պետության պատվիրակված լիազորությունների շրջանակներում կազմակերպված է անասնաբուժական ծառայություն:

Մեծ աշխատանք է կատարվել համայնքում անասունների մեջ բռնկված դաբաղ հիվանդության դեմ պայքարի և միջոցառումներ կազմակերպելու բնագավառում:

<< Գյուղնախարարության և Գեղարքունիքի մարզպետարանի կողմից ստացել ենք մեծ աջակցություն անհրաժեշտ դեղորայքների ձեռք բերման և անհրաժեշտ անասնաբույժ – մասնագետների ընդգրկման հարցում: Մարզպետարանի կողմից հատկացված 200000 դրամի և համայնքի բյուջեից հատկացված 150000 դրամի արժողությամբ դեղորայքն ու միջոցները անհատույց տրամադրվել են անասունների մեջ բռնկված հիվանդության դեմ պայքարի միջոցառումներին:

Ձեռք է բերվել շուրջ 13.0տ. գարու սերմացու, որը բաշխվել է բնակչությանը: Աշնանը ձեռք է բերվել նաև 9 տ. ցորենի սերմացու և կատարվել է 35 հա աշնանացան ցանքս: Ձեռք են բերվել թունաքիմիկատներ՝ կրծողների դեմ պայքարի համար:

Աջակցություն է ցույց տրվել գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման ընթացքում:

Չնայած այս ամենին, 2011թ. ապահովվեց հացահատիկային կուլտուրաների՝ գարու, ցորենի շատ ցածր բերքատվություն: Ազգաբնակչության մեծամասնությունը նույնիսկ ներդրած ծախսերը չկարողացան ստանալ: Պատճառը միգուցե անորակ սերմացուն էր, կամ ագրոնոմիկական նորմերի ոչ ճիշտ կիրառումը: Ամբողջ համայնքում 1-2 մարդ են, որ հողի պարարտացման նպատակով սելիտրա են օգտագործել: Բնակչությունը միայն պահանջում է: Իսկ հատկացման դեպքում գումար չի հավաքվում սելիտրա ձեռք բերելու համար:

Գաղտնիք չէ նաև, որ կարտոֆիլագործությունը հետին պլան է մղվել: Այժմ շատերի մոտ ցանկություն կա նորից զբաղվելու կարտոֆիլագործությամբ, սակայն ամբողջ համայնքի մակարդակով առկա է սերմացու կարտոֆիլի պակասը; Այժմվանից աշխատանքներ են տարվում նաև սերմացու կարտոֆիլ ձեռք բերելու ուղղությամբ:

Զգալի թերացումներ կան գյուղ.նշանակության հողերի օգտագործման բնագավառում: Չնայած մոցութային կարգով բնակչությանը հատկացվել են 205 հա խոտհարք և 43 հա վարելահող, սակայն վարելահողերը նպատակին չեն ծառայում , վերածվել են խոտհարքի, իսկ խոտհարքների մեծ մասը չեն շահագործվում՝ չեն հնձվում: Սահռելի քանակությամբ խոտհարք չհնձվելու պարագայում, այսօր ամբողջ համայնքում կուտակված խոտի պակաս է զգացվում: Բնակչության հետ զրույցներից պարզվում է, որ կերի պակասի պատճառով շատացել է անասունների հարկադիր մորթի քանակը:

Պատճառաբանությունները միշտ նույնն են՝ գյուղ տեխնիկայի պակասը, նավթամթերքների թանկությունը և իրոք, հանդամիջյան ճանապարհների վատթար վիճակը:

9. Վերջում համառոտ ներկայացնում եմ համայնքի 2009թ., 2010թ., 2011թ. բյուջեի կատարման տվյալները, քնի որ հետագայում լսվելու է նաև բյուջեի կատարման հաշվետվությունը.

Բյուջեից մարումներ	2009թ	2010թ.	2011թ.
Աշխատավարձի ապառք	3960.0	3612.8	2593.3
Կենսաթոշակ.հիմնադրամ 15%	1355.4	1937.0	1412.0
Նվերներ 1-ին դասարանցիներ		42.0	
10-րդ դաս. շջանավարտներ		150.0	
Դրամական աջակցություն ժողովրդին	125.0	819.0	675.0
Մանկապարտեզին կապիտալ դրամաշնորհ Նախադպրոցական կրթություն		1000.0	1598.2 4359.7
Ամանորի միջոցառման կազմակերպում		500.0	250.0

Մնացած միջոցներն ուղղվել են աշխատողների Ա.Վ.ՈՒ.Մ – ներին և համայնքի շարունակական ծախսերին՝ էլ. էներգիա, գործուղում, համակարգչային ծառայություններ և այլն:

ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

N	Հարկատեսակի անվանումը	պլան /տարեկան/			փաստացի			կատարման %		
		2009թ.	2010թ.	2011թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2009	2010	2011
1	Հողի հարկ	3468.4	4192.5	5491.1	3296.7	4452.8	2099.7	95	106	38
2	Գույքահարկ/փոխադրամիջ.հանար/	502.0	519.1	578.3	436.0	562.3	456.9	87	108	79
3	Հողի վարձավճար	400.0	400.0	626.1	173.2	146.8	125.5	43	37	20
4	Տեղական տուրք և վճար	76.0	76.0	76.0	30.0	32.0	58.7	39	42	77
5	Այլ գույքի վարձակալ.եկամուտներ	-------	1785.0	385.0	480.0	200.0	389.0	---	11	101

6	Արոտների վարձավճար	------	215.0	215.0	-----	-----	-----	---	0	0
7	Համահարթեցման դոտացիա	13121.6	12594.6	12755.0	13121.6	12594.6	12755.0	100	100	100
8	Պատվիրակված լիազորություն	729.6	600.0	600.0	729.6	600.0	600.0	100	100	100
9	**Ընդամենը տարեկան**	**18297.6**	**20382.2**	**21833.5**	**19545.9**	**18588.5**	**17361.5**	**107**	**90**	**79**
10	որից՝ Սեփական եկամուտներ	4046.4	7187.6	6145.4	3762.7	5393.9	2615.3	93	76	42

ՎԱՀԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ԲԱԼՅԱՆ

07.02.2012թ.